Արձանագրություն N 3

Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի շքամուտքերի և աստիճանավանդակների վերանորոգման աշխատանքների ձեռքբերման «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-17/6» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի

ք. Երևան

08.09.2017թ.
Ժամը 10:30

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ն. Ղուկասյան/ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Օ. Մկրտչյան /գնահատող/, Ս. Ղարագյոզյան /գնահատող/
Հ. Վարդերեսյան /բացող/, Ռ. Սարգսյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

1. «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-17/6» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում անհամապատասխանության շտկման մասին

(Ն. Ղուկասյան)

1.1 Համաձայն «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 41-րդ կետի՝ էլեկտրոնային եղանակով ծանուցվել էր առաջին տեղ զբաղեցրած մասնակցին՝ «Սանլորետ» ՍՊԸ-ին, մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել հայտում առկա անհամապատասխանությունը: Մասնակցի կողմից սահմանված ժամկետում չի շտկվել անհամապատասխանությունը: Գնահատող հանձնաժողովի որոշմամբ մասնակցի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է՝ հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

2. «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-17/6» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման մասին

(Ն. Ղուկասյան)

Գնահատող հանձնաժողովի կողմից մասնակիցների հայտերը էլեկտրոնային համակարգի միջոցով գնահատվել են հետևյալ կերպ.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
«Սանլորետ» ՍՊԸ	Անբավարար
«Կոտայք Շին» ՍՊԸ	Բավարար
«ԴԱՎԻԹՇԻՆ» ՍՊԸ	Բավարար
«Ձևավորում» ՓԲԸ	Բավարար
«Մոնտաժտրանսսշին» ՓԲԸ	Բավարար
«Էլշին» ՍՊԸ և «Գոռպլաստ» ՍՊԸ	Բավարար

«Ռազովալո» ՍՊԸ	Անավարար
«Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ	Անավարար
«ՍԱՍՈՒՆԱՍԱՐ» ՍՊԸ	Բավարար
«ՆԱՄԵՆԱՍԵԴ» ՍՊԸ	Անավարար
«ՌԱՋ ՇԻՆ» ՍՊԸ	Բավարար
«ԱՐԱՄԱՆ ՍԹՈՈՒՆ ՍԹԱՅԼ» ՍՊԸ	Բավարար
«Այպոշին» ՍՊԸ	Բավարար

«Սանլորետ» ՍՊԸ-ի, «Ռազովալո» ՍՊԸ-ի, «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի և «ՆԱՄԵՆԱՍԵԴ» ՍՊԸ-ի հայտերը հանձնաժողովի որոշմամբ գնահատվեց անբավարար և մերժվեց:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. Ընթացակարգի 1-ին և հաջորդաբար տեղեր զբաղեցնող մասնակիցների մասին

(Ն. Ղուկասյան)

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ԵՔ-ԳՀԾՁԲ-17/6» ծածկագրով գնման ընթացակարգի՝

- 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Կոտայք Շին» ՍՊԸ-ն, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից,

- 2-րդ տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «ԴԱՎԻԹՇԻՆ» ՍՊԸ-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5,դեմ - 0:

4. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին

(Ն. Ղուկասյան)

4.1 Հիմք ընդունելով Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ 08.09.2017թ. հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

4.2 08.09.2017թ. ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Հրավերով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ կներկայացվի հաջորդ տեղը զբաղեցրած մասնակիցներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

5. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ն. Ղուկասյան)

1-ին տեղ զբաղեցրած Մասնակցի որակավորումը հավաստող փաստաթղթերը գնահատելու նպատակով՝ Գնահատող հանձնաժողովի նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած Մասնակցի կողմից որակավորման փաստաթղթերը ներկայացնելու և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտի կողմից հարցումը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ժամը 10:30-ին, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում, ք. Երևան, Արգիշտիի փողոց 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ն. Ղուկասյան

Անդամներ՝ ---------- Հ. Վարդերեսյան

---------- Ռ. Սարգսյան

---------- Օ. Մկրտչյան

---------- Ս. Ղարագյոզյան

Քարտուղար՝ ---------- Ա. Համբարձումյան